ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

Ի պատասխան Ձեր 13.11.2023թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատակիցների կողմից դեռևս 2023 թվականի հունիսի 22-ին կենտրոն վարչական շրջանի Վարդանանց փողոցի հ.24 շենքի հ.3 հասցեում կատարած տեղատեսության արդյունքում պարզվել էր, որ նշված հասցեում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացվել է պատուհանի բացվածքների ֆիզիկական չափերի մեծացման և շենքի արտաքին պատին մետաղական աստիճանավանդակի ամրացման շինարարական աշխատանքներ, որի կապակցությամբ Արմեն Աբրահամյանի նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վարչության կողմից 22.06.2023թ. կազմվել է հ.003276 արձանագրությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ